

## ԱՆԱՆԻՏ ՄԵԻԹ-ԱՐՅԱՆ

## ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՄԻ ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

(14-րդ դարի վերջի - 15-րդ դարի սկզբի մի բնագրի նոր  
վերակրկնագրված տեքստ)

Հարսանեկան ծեսի և ամուսնական սովորությունների մասին վկայություններ ենք գտնում դեռևս V դարի հայ մատենագրության, ինչպես նաև ժողովրդական բանահյուսության մեջ, որտեղ պահպանվել են հեթանոսական շրջանում կատարվող արարողությունների և կարագրության բանավոր նմուշներ:

Քրիստոնեության տարածումից հետո նախաքրիստոնեական ժամանակներից մեզ հասած բոլոր տոներն ու ծեսերը դեռևս ամուր հիմքեր ունեին, թեև ժամանակի ընթացքում կրել են արտաքին որոշ փոփոխություններ: Ժողովուրդը, սովորության ուժի համաձայն, ավելի շատ ընդունում և կատարում էր նախնական այդ ծեսերը, քան պաշտոնական արարողությունները: Այս մասին Երվանդ Լալայանը գրում է. «Ծիսական կարգը նախնադարեան հասարակության մեջ օրհնքի ուժ է ունեցել... Հարսանեկան ծեսերին աւելի մեծ նշանակութիւն են տալիս, քան պսակին, այնպէս որ երիտասարդներին առանց հարսանեկան ծեսերի չեն պսակում, ինչպէս այդ անում են ամուրիների ժամանակ. և եթէ չհաս է լինում և կամ հոգևոր իշխանութիւնը պսակի հրամանը տալիս մեծ զումար է պահանջում, կատարում են հարսանեկան ծեսերը և առանց պսակի խորհուրդը կատարելու կենակցում»<sup>1</sup>:

Հայոց մեջ միջնադարում պսակը ավանդաբար կատարվում էր եկեղեցում: Այդ իսկ պատճառով ամուսնական կարգերի, հեթանոսությունից անցած կրոնական ծեսերի ու սովորությունների մասին տեղեկություններ են պահպանվել կանոնագրքերում ու Դատաստանագրքերում (սկսած Սահակ Պարթևի սահմանած կանոններից մինչև Ներսես Ծնորհալու, Հովհաննես Օձնեցու, Մխիթար Գոշի, Սմբատ Սպարապետի, Դավիթ Ալավկա որդու և ուրիշների կանոնները):

Մի շարք կանոնական կարգերի հետ միասին Մաշտոց ծիսական ժողովածուներում ներկայացվում է նաև պսակի կարգը, այսինքն՝ եկեղեցում կատարվող ամուսնական ծիսական պաշտոնական արարողակարգը<sup>2</sup>:

Վերջինս բաժանվում է մի քանի կանոնների.

- ա. կանոն նշան օրհնելոյ,
- բ. կանոն պսակի հանդերձ օրհնելոյ,
- գ. կանոն խաչփոխ առնելոյ,
- դ. կանոն կուսի պսակ առնելոյ,

<sup>1</sup> Լալայան Ե., Ծիսական կարգերը հայոց մլջ, Ա. պրակ, Թիֆլիս, 1913 թ., էջ 5:

<sup>2</sup> Մեզ հասած ամենավաղ ձևագիր աղբյուրները 9-10-րդ դարերի Մաշտոցներն են՝ ՄՄ ձև. թիվ 1001 և Վենեթիկի ձև. թիվ 457:

ե. կանոն օրհնության բաժակի հարսանեաց,

զ. կանոն թագ վերացուցանելոյ,

է. կանոն երկրորդ պսակի, այսինքն՝ ամուսնության այրեաց<sup>3</sup>:

14-րդ դարի վերջից կամ 15-րդ դարի սկզբից մեզ է հասել մի գրառում<sup>4</sup>, որը պահպանվել է Մատենադարանի թիվ 3937 ձեռագրում<sup>5</sup>: Ձեռագիրն ընդօրինակվել է 1370 թվականին, սակայն ձեռագրի վերջին էջերում (192բ-196բ) գետեղված այս նյութը մեկ այլ գրչի կողմից ավելացվել է հետագայում: Այն և՛ ազգագրական, և՛ եկեղեցակրոնական ուշագրավ ու կարևոր մի նյութ է՝ հարսանեական ծիսական սովորույթների ժողովրդական և պսակի խորհրդի եկեղեցական նկարագրությունների ու մեկնաբանությունների մի ամբողջություն: Հեղինակը (գրիչը) ծեսը ներկայացրել է այնպես, ինչպես այն կատարել է ժողովուրդը, և մեկնաբանել է եկեղեցական-քրիստոնեական տեսանկյունից:

Ձեռագրում գետեղված այս հետաքրքիր բնագրի որոշ հատվածներ առաջին անգամ 1956 թ. հրատարակել է Վարդ Բոդյանը<sup>6</sup>: Բոդյանից առաջ, 1889 թվականին, այն, բնագրային չնչին տարբերություններով, Մխիթարյան հայրերից մեկի կողմից «Բազմավելպում» հրատարակվել էր «Նախկին ազգային սովորույթներ հարսանեաց» վերնագրով<sup>7</sup>: Բնագիրը թվագրվել է հայկական ՌԾԹ (1610 թ.), իսկ ձեռագրային նյութի հեղինակը ենթադրաբար համարվել է Գրիգոր Տաթևացին կամ նրա ժամանակակիցներից մեկը:

«Բազմավելպում» ոչ մի հիշատակություն չկա վեներիկի մատենադարանում պահվող այդ ձեռագրի թվի մասին, ուստի նյութի վերաբերյալ մեր որոնումները ոչինչ չտվեցին: Մենք կարող ենք միայն ստույգ ասել, որ երկու հեղինակներն էլ, խոսելով նույն ձեռագրական նյութի մասին, այն հրատարակել են համավաճառք: Ջարմանալիորեն երկուսն էլ անտեսել և ոչ կարևոր են համարել ձեռագրում եղած հարսանեական ծիսական սովորույթությունների միջնադարյան հեղինակային մեկնությունները:

Ձեռագրական այս նյութը կարելի է համարել հարսանեական ծիսական սովորույթների միջնադարյան մեկնաբանություններից մեկը՝ կատարված ժողովրդական հենքի վրա, որն արտացոլում է միջնադարում կատարվող հարսանեական ծիսական սովորույթները:

Ստորև հրատարակում ենք բնագիրն ամբողջությամբ (ՄՄ ձեռ. թիվ 3937, թերթեր՝ 192բ-196բ)<sup>8</sup>: Բնագրում հանդիպող նշաններն են՝ // - անընթեռնելի կամ ջնջված տառը կամ բառը<sup>9</sup>, [ ] - վերականգնված տառը կամ բառը, // - նոր էջի սկիզբ:

<sup>3</sup> Տե՛ս Մաշտոց, Վեներիկ, ՚ի վանս Սրբոյն Ղազարու, ՌՄԶ (1831):

<sup>4</sup> Ժամանակագրական այս ճշգրտումները կարգրել ենք Մարենադարանի գիտաշխատողներ Գ. Տեր-Վարդանյանի և Ա. Ղազարոյանի օգնությամբ, որի համար հայրերում ենք մեր խորին շնորհակալությունը:

<sup>5</sup> Ժողովածու: 1370 թ.: Գրիչ՝ Սրեփանոս: Թերթ՝ 196: Նիւթ՝ Թուղթ: Մեծութիւն՝ 16x13: Գրութիւն՝ երկսիւն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 21: Պահպանակ՝ մագաղաթ 2, ուղղագիծ երկաթագիր, Անւարան: Յիշատակարան գրչութեան ժամանակի՝ 34ա, 46ա, 118ա, 169բ:

<sup>6</sup> Բոդյան Վ., Հարսանեական ծեսերի ու սովորույթների նկարագիր՝ գրանցված 14-րդ դարում: Բանբեր Մարենադարանի, Երևան, թիվ 3, 1956 թ., 1ջ 53:

<sup>7</sup> «Բազմավելպ», հյր. խէ, 1889 թ., Վեներիկ, 1ջ 232:

<sup>8</sup> Ձեռագիրը թերթի I, վերջից բնկած են թերթեր:

<sup>9</sup> Ձեռագրի վերջին թերթերի կարևոր մաշված ու պարտված են, այդ իսկ պարճատու անբնթեռնելի են:

## [ՎԱՍՆ ՊՍԱԿԻ]

Ջի խորհուրդը ասին, որ վեր երևոյթ երևի կերպարանք ինչ, բայց ունի ծածուկ ինչ յինքեան, գորարիմակ՝ ի գիշերի շաշափեսցէ որ զանաթ ինչ, որ ունի թանձրութիւն ինչ, բայց գորարիմակ նորին, աներևոյթ է ի նմանէ:

Այսպէս և խորհուրդը եկեղեցոյ խորհուրդ կոչին. զի ունին ինչ ի ձևոյ մարմնական, բայց ունի ծածուկ բազում ինչ, զոր ասէ առաքեալս:

Դարձեալ. զի ստեղծումն, որ արարն յԱստուծոյ ունէր երիս խորհուրդս: Նախ՝ զի բանականաց սկսաւ, այսինքն՝ ի հրեշտակաց, և ի բանականն աւարտեաց, այսինքն՝ ի մարդն, զի ոչ էր կատարեալ գործն Աստուծոյ, եթէ ոչ էր եղեալ մարդն: Երկրորդ՝ զի խորհրդեամբ ի մարդոյս բնութենէ կամեցաւ զարծանաւորս իւր ընտրել, զորօրինակ՝ եթէ որ ծառ տնկէ, և այն վասն պտղոյ է, թէպէտ ոմն տերն է և ճուխք և ծաղիկ, սակայն կերակրելին պտուղն է: Սոյնպէս՝ թէն բազում անհատք ծնան յԱդամայ, այլ Աստուած զարծանաւորս իւր ժողովեաց յըշտեմարանս իւր, ըստ՝ ժողովեաց զգորեանն յըշտեմարանն և զ(յ)արդն այրեսցես (Հմմտ. Մատթ. Գ 12, Ղուկ. Գ 17): Երրորդ՝ զի կամէր Աստուած ի յարարած բնութենէս ի իւր էութիւնն միացուցանել յաիտենականն, զոր յետ ժամանակաց եկն և էառ մարմին: Չայս ասէ առաքեալն խորհուրդն, որ ծածկեալ էր յազգաց և յամենայնից, յայտնեցաւ և եկեղեցի, զորոյ զմնանութիւնն ցուցանէ խորհուրդ պսակին ի փեսայն և ի հարսն:

Դարձեալ. Քրիստոս ունէր կերպ մնանութեան՝ նախքան զմարդանալն և ի ժամանակ մարդեղութեանն և ի խաչին և յետ յարութեանն, զորոյ զկերպաւորութիւնն մարմնաւոր փեսայն ցուցանէ: *Ջի երևի արարածույքս իմացեալ տեսանի* (Հոմ. Ա. 20), որպէս ասէ առաքեալն, զորս տեսեալն էլի ի բնութենէ առաքելոյս, որ ասէ խորհուրդն: Այսպէս և զերիս զառաջին խորհուրդն ունին կատարեալ ինքեան մարդն, զի ի բա//նականաց սկսանի խորհուրդ պսակին և ի բանականն կատարի, որ է Որդին: Վասն որոյ, եթէ որ ամուլ իցէ, ոչ առնէ կատարեալ զբանն Աստուծոյ, ոչ տայ հրաման ամուսնութեան, զի զցանկութիւն ախտին միայն հանէ և ոչ կատարեալ արհմութիւնն Աստուծոյ, որ ասէ. *Աճեցէ՛ք և բազմացէ՛ք* (ՄՄ. Ա. 22. 28): Նմանապէս և զարծանաւորսն Քրիստոսի յառաջ բերէ սուրբ ամուսնութիւնն, որպէս զՅովհաննէս և զՍամուէլ և զայլն ամենայն: Իսկ պոռնիկն շուն կոչի, զի չկատարէ զխորհուրդն Աստուծոյ, որ առ արծանաւորսն իւր ունի: Վասն որոյ և արտաքոյ բարեացն Աստուծոյ տանջի ի դրունս դժոխաց: Նմին նման՝ յԱստուած միացուցանէ խորհուրդ պսակին, յորժամ սուրբ անկողնով կացեալ և բարեպէս զառակ ծնեալ: Հարսնանան Քրիստոսի հոգով և ի կատարածի միանայ ընդ փեսային հարսնացեալ եկեղեցի: Վասն որոյ ասէ առաքեալ խորհուրդն ըստ նմին արիմակի. Եւ ունի փեսայն էլ և մուտ: Ըստ շարադրութեանն, որ նախքան զմարդանալ բանին, զորս տեսցուք, թէպէտ և ոմանց անդէպ թոյի, բայց ոչ առաքելոյն Պաղոսի, որ ասէ. *խորհուրդս այս մեծ է* (Եփես. Ե. 32): Ե՛ր ի ժամ խաչին, ե՛ր յետ յարութեանն, զոր կարգաւորաբար յայտնի արասցուք, զի յայտնի լիցի բան առաքելոյն, որ ասէ խորհուրդս այս. *Ես եմ ի Քրիստոսն յեկեղեցի*:

Արդ՝ նախ սովորութիւն է ազգաց՝ փեսային խնդրել հարսն և կրկին կերպիւ ընտրեն. նախ՝ ի յիրեանց հաւատոյն՝ թէ հայ քրիստոնէայ է և թէ այլ քրիստոնէայք, և ապա ի մէջ

նոցա լընտիր և պատուական ազգէ մեծատանց և յազատաց, զի գոն աղքատ և գոեփիկ հայք:

Այսպէս և բանն Աստուած ընտրեաց զմարմինն իւր, զի ի յամենայն ստեղծուածոցս ի մարդոյս էառ մարմին, որ էր ազգական մնա բանականութեամբն: Եւ ապա ի մէջ մարդոյս ի զառակէն Աքրահամու բունն հարկանէ: Ասէ առաքեալն. *Եւ ոչ յայլ զարմէ, վասն որոյ և որք ընտրեան զհնամին իւր*: Այնպէս ընտրեացն, զի եղիցին ըստ նմանութեանն Աքրահամու, զոր Աստուած ետես, ընտրեաց և հաւան եղև մնա: Զի երիս բարութիւնս զոյր կատարեալ ի յԱքրահայ: Նախ՝ զի հաւատոց յԱստուած կատարելապէս մինչև համարեցաւ մնա յարդարութիւն: Բ (2-րդ)՝ ողորմած էր. յայտ է, զի առ կաղնեաւն Մամբրէիցն ընդ յտրանն, որ էր ի վերայ չոր ///: Գ (3-րդ)՝ զի ոչ երբէք լինի ընթեր//ցեալ, թէ խառնակեցաւ երբէք Աքրահամ յատար անկողին, այլ միայն յամուսին իւր:

Այսպէս թէ ընտրեացն քրիստոնեայքն՝ զհաւատովն և զողորմածն և սրբեալ ամուսնութեամբն ընտրեացն, զի եղիցին մնան բարձրելոյն, որ առ Աքրահամ: Եւ տե՛ս, զի ազգականքն ընտրեն և ոչ փեսայն, որպէս և հայրն Աստուած ի Հին արեւնս և ոչ բանին անձնատրութիւնն:

Երկրորդ. սովորութիւն է՝ զի յետ ընտրութեանն երթեալ խաւսին և տան թասս գինի ի հայր և ի մայր հարսինն և կամ ի համամանս նոցին:

Զայս արար Աստուած, զի ընդ խաւսելն Աքրահամու և ընդ որդոց նորին հաւանութեամբ արինացն ետ Աստուած զԲ (2) պնակ՝ ի տոն Մովսիսի և Ահարոնի, որք ծնողք էին բանի ժողովրդեանն, զի որպէս գինի ուրախ առնէ զմարմին և Բանն Աստուծոյ զհոգին միսիթարէս և ապա յետ նորա ի մարգարէսն, որք հոգացողք էին հարսին բնութեանէս ի բնակութիւն բանին Աստուծոյ: Որպէս ասէ առաքեալ. *Խաւսեցեալ զձեզ, իբրև զկոյս մի, Սուրբ Փնասիին Քրիստոսի*: Վասն որոյ և խօսեցողքն պարտին լինել քահանայք, որք են յԱստուածակոյս կողմանէ և ասողքն հեզք, որպիսին՝ զՄովսէս: *Զի հեզ է ծառայն իմ Մովսէս* (տե՛ս Թուոց ԺԲ 3), ասէ:

Երրորդ. սովորութիւն է՝ յամենայն տանի և տարեկանաց գնալ ի տուն հարսինն՝ ընծայիլ և կերակրովք:

Զայս արար Աստուած ի յարէն յայնմանէ, որ հաճեցաւ յԱքրահամն և ի Մովսէս յամենայն դարու և ի ժամանակի առաքել մարգարէս բանի և մարգարէութեամբ, նշանօք և արուեստիւք: Վասն որոյ և եկեալքն ի տուն հարսինն, պարտին մնանիլ մարգարէիցն, զի կարասցեն տ[ալ] և հաշտեցուցանել զատար ազգիսն առ փեսայն:

Չորրորդ. սովորութիւն է՝ գնալ քահանայիցն և տանել նշան՝ և այն մատանի կամ ապարանջան կամ գինոյ, որ ետ պատրումն, և կնիք առ հարսն և ի կամս նորա, մինչ զի այլ ոչ գոյ հնար՝ քակել նոցա ի միմեանց:

Զայս արար Աստուած, զի առաքեց զԳաբրիէլ, որ երբն նշան կուսին զաւետիսն և զՀոգին Սուրբ և զգօրութիւն բարձրելոյն, որպէս ասէ յԱւետարանի անո: Զի աւետիսն էր լուսնկն կուսին՝ // իբրև զգինոյ, և Հոգին Սուրբ՝ իբր զմատանի ի մատունսն, զի էր մարմնացուցանող Բանին Աստուծոյ և որպէս մատամբ ներգործէր: Վասն որոյ և Տէրն մատանին ասէր հոգոյն, իսկ զօրութիւն բարձրելոյն՝ իբրև զապարանջան՝ յայն և հաստատ՝ զգործ և զկնիկ կուսութեանն՝ պահեալ ի ծնունդն և յետ նորին: Վասն որոյ կանոնեցաւ յեկեղեցի

նշանակում, իբրև գպասկեալ լինել անքակելի, զի որպէս յետ միատրութեան բանին ի մարմինն յարգանդ կուսին, այլ ոչ քակեցաւ: Այսպէս նոր նշանեացն, անքակելի մնասցեն:

Հինգերորդ՝ զի յետ նշանացն սովորութիւն է՝ առնել պատրաստութիւն հարսանեացն և տալ զամիտսն հաց և միս [և] զհնի և այլ ոչինչ, զի աւելի ինչ խնդրելն յանարհնացն է:

Չայս արար Քրիստոս, զի ետ ժողովրդեանն հաց և ձուկն և զայս կրկին անգամ յանարհնացն, նա թէ՛ զքանչելիսն ամենայն, որ ի յաչսն և ի յականջսն և ի ձեռսն և ի բոլոր մարմինն, նա թէ՛ զարիւն իւր ըմբելի և զմարմինն հաց ետ, որ կեանս տալ աշխարհի:

Իսկ արդ՝ այտօքիլ լինին նախքան զհարսանիսն, որպէս և խորհուրդն կատարեցաւ ի Քրիստոս նախքան զխաչելութիւն մարմնացեալ Բանին:

Իսկ վեցերորդն. կատարի սովորութիւն ի ժամանակ հարսանեացն, որպէս և Քրիստոս ի ժամ յաչելութեանն: Եւ զի յերեկոյն ժամուն առնեն հալուէս Դ (4) գունով՝ կարմիր և դեղին, կանաչ և սպիտակ: Եւ զհանդերձն փեսային և հարսին, ի վերայ եղեալ, տանին նախ ի տուն հարսինն: Բայց զհարսինն զամենայն ինչ մերկացուցանեն ի մմանէ և ապա զնորն զգեցուցանեն, իսկ փեսային ոչ հանեն, այլ ի վերայ հնոյն զնորն զգեցուցանեն:

Այսպէս արար և Բանն Աստուած, զի ի ժամ յաչին ետ զԱւետարանն՝ իբր զքաղցր մեղր: Որպէս ասէ մարգարէն. *Քաղցր են ի քիմս իմ բանք Քո, որպէս զմեղր բեխրան* (Սաղմ. ԾԺԸ. 103): Եւ զայն խառնեալ հալուէ, յիւղոյ և յալերէ, որ նշանակէ. իւղն՝ զվարդապետաց բանն և ալերն՝ զբան իմաստութիւն իմաստնոցն, զի երբ խառնին սոքա, ապա անուշաման իբրև զհալուէս ի կոկորդս հաւատացելոց: // Իսկ որակ հալուէիցն. կարմիրն նշանակէ զՄատթեոս, զի զմարդկութիւնսն պատմէ, որ է կարմիր՝ ըստ Երզոյն, իսկ դեղինն՝ զՄարկոս, զի առիծակերպ [առա]ջի յասել Աւետարանին Իւրոյ, իսկ կանաչ՝ Ղուկաս, որ ունի զհերկս եզանց, ի կանաչէ յառաջ եկեալ, իսկ սպիտակն՝ զՅովհաննէս, զի զանեղ բնութիւնն և պարտէզն քարոզէ, զաստուածութիւնն, որ է սպիտակ:

Իսկ ի մարդկանէ ընկալաւ զԴ (4) առաքիմութիւնն՝ խոհեմութիւնն և զողջախոհութիւնն, զարիութիւնն և զարդարութիւնն: Ջի սպիտակութիւնն նշանակէ զխոհեմութիւնն, որ է իմաստութիւնն, իսկ կանաչութիւնն՝ զողջախոհութիւնն, զի ծննդկան է, իսկ դեղինն՝ զարիութիւնն, զի աստուածասէր է ցամաք մարմինն՝ ըստ Փիլոնի: Իսկ կարմրութիւնն՝ զարդարութիւնն նշանակէ, զի կշռէ փոխանակ արեանն Քրիստոսի, զիւր արեանն հեղումն: Չայս արդարութեան ասէր առաքեալն. *Լնում զպակասութիւն չարչարանացն Քրիստոսի ի մարմնի իմում* (Կող. Ա. 24):

Իսկ զի զհարսին զհանդերձսն ամենայն հանեն, զի ոչինչ գոյր ի բնութիւն մարդկային պատութեան, ընդ որում՝ Հայրն երկնատր զանառակ որդին ասէ. *Վաղվաղակի հանէ՞ք զպատմութեանն առաջին, հագուցէ՞ք դմս, որ է անմեղութիւնն առաջին, որ ի դրախտին և մատանի ձեռս՝ զգործս առաքիմութեան և կաշիկ յոտս* (Ղուկ. 15. 22)՝ զմեղելոտի ի գործոցն զարդարանս: Եւ զի ի յոտսն, որ է վերջին մասն, այսինքն՝ ի դուռն մահու անյայտ առնել զմեղսն, որպէս և կօշիկ զոտսն: Իսկ զփեսային ոչ հանեն. նշանակէ՛ զի յԱստուած ոչինչ ապականութիւն ոչ գոյր, այլ ամենայն ինչ Նորա սուրբ է, այլ զի մարդկային բնութիւն սգեցաւ: Որպէս ասէ մարգարէն. *Տէր թագաւորեաց զվաղելութիւն զգեցաւ* (Սաղմ. ՂԲ. 1): Վասն այնորիկ ոչ հանեն ի փեսայէն ինչ: Իսկ երեկոյն նշանակէ զվերջին դարն, յորում եկն Բանն Աստուած առնով մարմին և տալ զարեւս իւր ի մեզ: Իսկ զի ի ձեռն քահա-

նայիցն լինի այս. զի միջնորդութեամբ մարգարէիցն և առաքելոցն տուան օրէնքն. զորոյ նշանակութիւնն ունի մին քահանան հարսինն և մին՝ փեսայինն:

Իսկ եւթներորդ. զի ի ժամ հարսանեացն հրաւիրակ առաքին ի տուն հարսին՝ տալ անտիս գալոյ հարսանեացն, զոր գեղջուկքն աղուէս կոչեն վասն թաքնաբար գալոյն:

Չորոյ նշանակութիւնն Յովհաննէս Մկրտիչն է, ըստ որում ասէր ինքն, որ ունի հարսն նաև փեսայ, իսկ // բարեկամ փեսային նմա ուրախութեամբն ուրախ լինի վասն ձայնի փեսայի. զի ետ անտիս յաշխարհի գալ գարագոյն, քան զիս, որում չեմ արժանի զիրացն կօշկաց լուծ: Իսկ ի դժոխս ետ անտիս ոգոցն զգալն Միաձնին և զազատիլ նոցին, որոյ պարգևք ընկալեալ գմարգարէսն զինք, նախ գուշակեցին վասն բանին, և ապտակս անտ Արամայ ի սատանայէ, զի ոչ եղև գիտակ տնարէնութեան բանին՝ ըստ առաքելոյ: Չի թէ էր ծանուցեալ ոչ արդևք. զի Տէրն փառաց ի խաչ հանէի:

Ութերորդ. զի սովորութիւն է՝ զի մինչև ի ժամանակ պսակին գալ և առնուլ և ուտել է մերձաւորաց փեսային ի տան հարսին, իսկ յետ պսակին՝ այլ ոչ:

Չայս արար Տէր մեր, զի մինչև էր խաչեալ ի յաշխարհի ընդ մարդկան շրջէր, ընդ նոսին ուտէր և ննջէր, խաւսէր և վարդապետէր և զսքանչելիսն կատարէր, իսկ յորժամ յարեան ի մեռելոց, այլ ոչ երևեցաւ ժողովորեանն և ոչ եկէր ընդ նոսս, զի կատարացն տնարէնութիւնք մարդէնութեան՝ Նորին և ծանաթացան հաւատով Նորա, մանաւանդ թեզ փոխանորդ իւր թողեալ, ըստ որում ասէր. *Մեծամեծ ևս քան զնոյն զործիցէք, զի ես առ Հայր երթամ* (Յովհ. Ժ. 12):

Իսկ իններորդ. սովորութիւն է՝ տանել ի դուռն եկեղեցոյն բազում էրգաւք և նուագարանաւք, ծնծղայիւք և քնարիւք և երիվարաւք:

Չայսպիսի նշանակութիւն ի ծննդեանն Բրիտտոսի հրեշտակք զովեցին՝ «Փառք ի բարձունս» երգելով և ի գալն յԵրուսաղէմ յովանկաւ: Բազում ժողովորոք տարածանէին զհանդարձս և ճօճանակէին մանկուքն և զովէին մինչև եմուտ ի տաճարն, եթէ քարինքն աղաղակեցին (Ղուկ. ԺԹ. 41):

Իսկ իններորդ<sup>10</sup>. սովորութիւն է՝ ի դրան եկեղեցոյն զինահարել նախ մայրն ի փեսայն և ապա քահանայն զհարսն ի փեսայն և ապա անդրադարձեալ և երկորքեանն յանձն առնուն: Չայստիկ նշանակեաց Պետրոս յասելն. *Տէր, ահաասպիկ մեր թողաք զամենայն և եկաք զկնի Բո* (Մարկ. Ժ. 28): Արդ՝ զինչ լինելոց է մեզ, զոր յանձն էառ, որն դուք որ թողիք և եկիք զկնի իմ, հարիւրապատիկ տամ աստ և հանդերձելումն: Իսկ յանձն առնուլ մարդոյս նշանակէ որդոցն որոտման ասելն: Կարող եմք զբաժակն ըմբել և զմկրտութիւնն մկրտել: Իսկ զի մայրն և // յանձնէ զհարսն, այս ասելն է. *Մատան զինի ոչ ունենք վասն հարսանեացն* (Յովհ. Բ 3), որում պատասխանէր. *Չի կայ իմ և քո՝ կին քո, չև է հասեալ ժամանակ իմ* (Յովհ. Բ 4):

Իսկ տասներորդ. սովորութիւն է՝ զի նարատ ոլորեալ՝ կարմիր ընդ բանբակի խառնեալ և երեկ կղի շարամանեալ. մի կուղն կարմիրովն խառն և երկուսն՝ անխառն, միայն բանբակ, զոր մաննն փեսեղբայրն և քահանայն, հարսին քոյրն և քահանան և նովա կապեն զխաչն ի պարանոցն փեսայինն:

<sup>10</sup> Ձևագրում գրիչը խախտել է համարակալման հերթականությունը՝ կրկնելով իններորդը: Մենք ներկայացնում ենք այնպես, ինչպես բնագրում է:

Այս գղատանությունը Սուրբ Երրորդությանն նշանակել, յորոց մի անձն միատրել ընդ մարմին, զոր նշանակել կարմիրն, իսկ երկուսն, առանց կարմրոյ՝ զՀայր և զՀոգին: Եւ այն միատրեալ մի բնություն՝ երրորդական անձնատրություն՝ անխառն և անբաժան, զոր ի ձեռն խաչին կախուիմք հաւատով ի պարանոցն Աստուծոյ, այսինքն՝ առաքելոցն արիմօքն և ի վերայ լանջաց նորա կամք հանապազ[ար] ի վերայ ժողովրդեան Նորա, իսկ /// Անն, այսինքն՝ ուսուցանեն զայս /// Աոր օրինացն և փեսեղբայրն՝ դասք հեթանոսացն /// և ժողովորդ՝ հին արիմացն ///:

Յովհաննէս Մկրտիչն նշանակէր, որ վկայէր. *Սա է, վասն որոյ ես նա /// էի առջի իմ եղև Բրիստոս (Յովհ. Ա. 30):* Այսքիկ նշանակեն զփեսայութիւնն Բրիստոսի, որ ի ժամ խաչելութեանն:

Իսկ մետասաներորդ. սովորութիւն է՝ զի արտաքոյ եկեղեցոյն յանձնեն և ի մէջ եկեղեցոյն պսակեն և արտաքոյ եկեղեցոյն առնեն զգործ ամուսնութեան:

Եւ այսքիկ նշանակեն, զի արտաքոյ դրախտին ստեղծաւ մարդն կնամ և ի դրախտին պսակեցաւ: Ասաց. *Եղիցին երկոքեանն ի մարմին մի (Մատթ. ԺԹ. 5):* Եւ ի դրախտէն ելեալ, ապա ամուսնացան: Վասն որոյ և թէպէտ յեկեղեցին պսակին, այլ ոչ ամուսնանան, զի այս անարգանաց գործ է, որ ոչ վայել է դրախտին նոցա, զի մարդ ի պատուի էր և ոչ իմացաւ և այն:

Իսկ երկուտասաներորդ. սովորութիւն է՝ պատարագաւ պսակել. ժամամտաւ և ամենայն, որ ինչ պատարագին կարգն, զի Բրիստոս արիմակել է: Ըստ առաքելոյս, վասն որոյ ինչ ճշմարտութիւնն է, զայն արիմակին յայտնի առնիք:

Իսկ երեքտասաներորդ. սովորութիւն է՝ պսակ անուանել և պսակ դնել ի գլուխ փեսային և հարսինն:

Այս այն է, որ ի յերգսն պատմի: Տեսէ՛ք զՍողոմոն արքայն, որ պսակեց մայր իւր յաւոր փեսայութեան, որ է խաչին // փուշ պսակն, որ եղին ազգականք մար նորա ի ժամ չարչարանացն: Եւ զի թագաւոր էր Բրիստոս, զոր արժանապէս պսակեցին, իբր նախատինս դնելով և զայս, որ նմա ի նախատինս եղաւ: Մ'եր ճշմարտապէս ստուգեմք ի ձեռն արիմակին՝ զնա թագաւոր և տէր կարդալով:

Իսկ չորեքտասաներորդ. սովորութիւն է՝ սպիտակ հանդերձ փեսային սզեցուցանել և խաչ գաւտի կապել կարմիր՝ յետոյ և առաջի, մանաւանդ, զի յետ ընթերցմանն արհնել և զայն ըմբել տալ. զկէսն հարսինն և զկէսն փեսային:

Սպիտակ հանդերձն զկուսութիւն փեսային ցուցանէ, որ կացեալ է ի ժամ փեսայութեանն, իսկ խաչկապն՝ իբր թէ խաչելոյն զօրութեամբն պահեցաւ, զի առանց իմ ոչինչ կարէք առնել: Իսկ բաժակն հաւասարապէս ըմբելն՝ զչարչարանսն օրինացն Բրիստոսի միապէս յանձին ունել, զի է Բրիստոս Յիսուս և ո՛չ արու և ո՛չ էք: *Ջի ամենեքեան դուք մի էք՝ ի Բրիստոս Յիսուս (տե՛ս Գաղ. Գ 26),* ասէ առաքեալ:

Իսկ հնգետասաներորդ. զի սուր է քարշեալ յաջմէ և յահեկէ ի հանելն յեկեղեցոյն: *Ջի հրամայեաց Աստուած բոցեղէն սրոյ շուրջանակի պահել զնանապարհս ծառոյն կենաց՝ ի հանելն զԱդամ (հմմտ. Ծննդ. Գ 24):*

Իսկ վեշտասաներորդ՝ զի նստին յաստիճան եկեղեցոյն և ամենեքեան պար առեալ երկրպագեն՝ թագաւոր զնա կարդալով: *Ջորոյ զերազանցութիւնն զԲրիստոսի պատմէ*

մարգարէն, որպէս փեսայ, զի ելանէ յառազաստէ և ցնծան, զորօրինակն՝ տեսաք եղև[ցի] յառազաստէ եկեղեցոյ և ի կարօտութենէ նորին երկրպագենք օրինակի նորին, այլ և ելնելն նորա յեկեղեցոյն, օրինակ է զպալտեան [յեր]կնից: Յորժամ միանայ ընդ փեսային, որում ամենայն լ[ե]զու խոստովան լիցի, թէ Տէր է Յիսուս ի փառս Աստուծոյ Հօր:

Իսկ եւթնևտասաներորդ. սովորութիւն է՝ այլ ոչ դառնալ ի տուն հարսին, այլ երթան ի տ[ուն] հօրն փեսային:

Ջի Քրիստոս [մին]չև ի ժամ յաչելութեանն յաշխարհի, իսկ յորժամ /// ի յաչին, ամեալ զք /// մարդոյն, համբարձաւ ի սեպհա[կ]յան տուն Հօրն՝ յերկինս, ապա անիմաստ է այլ դառնալ ի տուն հարսին:

Ութնևտասաներորդ. սովորութիւն է՝ ի տեղի բարձր նստ[ել] ///, որ ակներև /// տեսանի /// ըմ[պ]ել մինչև յերեկոյ, իսկ երեկոյն առաջի իրոցն ուտել սակաւ ինչ: Վասն զի Քրիստոս ի ժամ յաչին պարզեալ էր ձեռօք և ոչ ջուր անգամ ետուն նմա, զի ասէր՝ *Ծարսաւ եմ* (տե՛ս Յովհ. ԺԹ. 28.): Այլ և յետ յարութեանն ի տուրնջեան անխ/// արար կայր, իսկ երեկոյն որսքն փակելովք ասէր. *Մի՞թէ ունիք ինչ ուտելոյ /// նմա ձկան խորովելոյ մասն* (Յովհ. ԻԱ. 5.): Ապա ուրեմն՝ անմտութիւն է փե[սայ]ին առաջի ժողովրդեանն ուտ[ել] ինչ]:

Իննևտասաներորդ. զի եւթն /// հարսանեանց որչափ նստի փեսայն յառազաստն՝ մանկունք նախատինս տան հարսնքունքն:

Որ նշանակէր՝ զանխատինք հրէ[սայ] ժողովրդեանն, որ քոյր էր ղ[ե]թանոսաց հարսին, զի նա [էր] հարսն Քրիստոսի և արտաքսեցաւ /// յԱստուծոյ աչացն ելին, ասէ առաքեալ. /// մարդկան ատելի եղեն:

Քսաներորդ. զի յետ եւթն ատր /// պսակն և ապա հրա[ման տար] յԸ. (8) ատրն /// կատարելութիւն ընտրեալքն ի բնութենէս, իբրև զմի հարսն արժանատրեալք մտանեն յառազաստն, ըստ այնմ՝ եկն փեսայն և պատրաստութիւնքն մտին ի հարսանիսն, և փակեցաւ դուռն:

Իսկ զի ճանապարհին կամ յայլ գեղոյ կամ ի միատունն հալածեն, և կալնուն զկիրճս ճանապարհաց և խնդրեն ինչս և ոչ թողուն, մինչև առնուն:

Եւ այս թերևս զերեց որդոյն ունի զհակառակութիւն, որ լուեալ զձայն պարօցն ուրախութեան անառակին, հարցանէ. *Ո՞վ է սա թագաւոր փառաց* (Սաղմ. ԻԳ. 9) և *թէ ուլ մի երբէք ոչ ետու զիս* (Ղուկ. ԺԵ. 29.): Այստքիկ և այլ բազում, որ օրինակ է Քրիստոսի և եկեղեցոյ առ մարմնատր փեսայս, վասն որոյ խորհուրդս այսմ է: Դարձեալ մեծ լսես, մի՛ այսպէս իմասցիս, թէ պսակ մարդոյս մեծ է, քան զՔրիստոս, իբր թէ հազիւ արինակի Քրիստոս ի սոսա, այլ մեծանալով զայն, ասէ, թէ ոչ անասնական իմն է այս գործ պսակիս, այլ մեծ իմն է, զի ի Քրիստոս արինակի և յեկեղեցիս, իսկ զարինակ սիրոյ ասես.....: